ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1300-2021 գրությամբ Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի 29.01.2021թ. թիվ 1.4/367-2021 գրության հիման վրա 03.02.2021թ. թիվ 26/26/1300-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/33 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային ժողովի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 29.01.2021թ. թիվ 1.4/367-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը տեքստիլ մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է 2020 թվականի դեկտեմբերի 14-ին: Ընթացակարգին մասնակցելու նպատակով մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 12.01.2021թ. ani.nersisyan@parliament.am էլեկտրոնային փոստի միջոցով Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը: Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել հաստատված պայմանագիրը և պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ տրամադրում է Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/33 ընթացակարգի շրջանակներում 11.02.2021թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/33 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի կողմից իր կարիքների համար տեքստիլ մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱԺ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

3. Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին 12.01.2021թ. ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել ստորագրել այն և 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացնել լիազոր մարմին:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1300-2021 գրությունը, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի 29.01.2021թ. թիվ 1.4/367-2021 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում,</u> չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպես, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի կողմից իր կարիքների համար տեքստիլ մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ-ԱԺ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին ***12.01.2021թ.*** ***ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել ստորագրել այն և 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Պատվիրատուին:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***26.01.2021թ.*** նիստի թիվ 3 արձանագրությամբ ***արձանագրվել է, որ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները***, ինչով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած և Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացնել լիազոր մարմին:

Այսպիսով՝ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:</u>***

Մինչդեռ, սույն գործի փաստերի հիման վրա արձանագրում եմ, որ ***<u>Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 26.01.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 10 աշխատանքային օրը լրացած չլինելու պայմաններում, Մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելով, խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:</u>***

Ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված՝ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2021թ. թիվ 26/26/1300-2021 գրությամբ Ա/Ձ Սեպուհ Ներսիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**